ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
05.2020
06.2020
07.2020
08.2020
09.2020
Սեպտեմբեր
10.2020
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Սեպտեմբեր

թիվ 9 (265)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին

5 «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐԱՔՍ ԷԼԻՏ» առևտրի կենտրոն, «ՎԱԳԱՍ» ՍՊԸ-ներին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ «Սյունիք», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «Իզմիրլյան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «Իսահակյան», «ՀԻՄԱ» ՈՒՎԿ ՍՊԸ «Երիտասարդական», «ՖԱՄԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ «Հարավ-արևմտյան» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 3 վարկային կազմակերպության, 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 2 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 151Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 149-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 288-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 150-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 154-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 233 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

34 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 164-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

35 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

*«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքով սահմանված կարգով երաշխավորված ավանդի չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 1-ից եւ տարածվում է նաեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող ավանդային պայմանագրերի վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
28 սեպտեմբերի 2020 թ., Երեւան, ՀՕ-422-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի սեպտեմբերի 16-ին:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21.1-ին հոդվածի 2-րդ մասի «ե» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, ինչպես նաեւ դրա անդամների ընտրությունը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ սույն օրենքի 21.3-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված դեպքերի, երբ ընդհանուր ժողովը չունի խորհրդի անդամների ընտրության եւ լիազորությունների դադարեցման իրավասություն: Խորհրդի քանակական կազմի հաստատման եւ դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում, բացառությամբ սույն օրենքի 21.3-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված դեպքերի, երբ խորհրդի քանակական կազմը կարող է հաստատվել արտահերթ ընդհանուր ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե ժողովը որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.»:

Հոդված 2. Օրենքի 21.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Սույն մասի երկրորդ եւ երրորդ պարբերությունները չեն տարածվում սույն հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված դեպքերի վրա:».

2) 4-րդ մասի երրորդ պարբերության «միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա» բառերը հանել.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված դեպքերում խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարման (դադարեցման) կարգն ու պայմանները սահմանվում են կանոնադրությամբ:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Բանկի խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել այլ բանկի խորհրդի անդամ, եթե նա ունի բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն վեց տարվա մասնագիտական ստաժ, որից երեք տարին՝ ընկերության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, խորհրդի անդամի կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամի պաշտոնում, կամ հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպության ներկայացուցիչ կամ ունի տնտեսագիտության բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ, եւ որի կողմից այլ բանկի խորհրդի անդամ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի սեպտեմբերի 16-ին:

հանդիսանալը չի ունենա բացասական ազդեցություն կազմակերպությունների եւ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի բնականոն գործունեության վրա, եւ որի նկատմամբ կիրառելի կլինեն բանկի ղեկավար լինելը բացառող՝ օրենքով սահմանված հիմքերը:

Սույն մասով նախատեսված անձը կարող է խորհրդի անդամ լինել ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի կեսում:»:

Հոդված 3. Օրենքի 21.9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «իր դիմումի համաձայն կամ» բառերը հանել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

ա) իր դիմումի համաձայն.

բ) մահանալու դեպքում.

գ) բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:»:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն օրենքի 21.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում բանկի խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել այլ բանկի խորհրդի անդամ:»:

Հոդված 5. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում ««դ», «ե», «ժ» և «ժբ»» բառերը փոխարինել «5-րդ, 11-րդ և 13-րդ» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

1 հոկտեմբերի 2020 թ., Երևան, ՀՕ-437-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԱՐԱՔՍ ԷԼԻՏ» առևտրի կենտրոն**,** «ՎԱԳԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 144Ա, 161Ա):
- ***Թույլատրվել է*** «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սյունիք», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Իզմիրլյան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/501Ա, 1/530Ա):
- ***Գրանցվել են*** «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Իսահակյան», «ՀԻՄԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Երիտասարդական», «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Հարավ-արևմտյան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/529Ա, 1/533Ա, 1/551Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 վարկային կազմակերպության, 1 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 2 850 000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/545Ա, 1/546Ա, 1/547Ա, 1/549Ա), 2 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/545Ա, 1/546Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2020 թ. սեպտեմբերի 15-ի թիվ 151Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 4.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 5.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 2.75%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 288-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել ներդրումային ծառայություններ մատուցող անձի՝ որպես շուկա ստեղծողի գործունեության նկատմամբ գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշներից և գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքներից բացառություններ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 171-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի «Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» Կանոնակարգ 4/17-ը հաստատելու մասին թիվ 288-Ն որոշմամբ հաստատված «Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» Կանոնակարգ 4/17-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-12-րդ ենթակետերով.

«7) շուկա ստեղծող՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը, համաձայն կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների, կարգավորվող շուկայում շրջանառվող որևէ դասի արժեթղթի իրացվելիությունն ապահովելու նպատակով իրականացնում է շարունակական երկկողմանի գնանշումներ և իր անունից և իր հաշվին կնքում է տվյալ դասի արժեթղթերով գործարքներ,

8) թողարկող՝ այն թողարկողը, որի որևէ դասի արժեթղթի համար ներդրումային ծառայություններ մատուցող անձը շուկա ստեղծող է,

9) գնանշում՝ արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով կարգավորվող շուկայի առևտրային համակարգում արժեթղթերի գնման կամ վաճառքի գնի հայտարարումը,

10) երկկողմանի գնանշում՝ արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով կարգավորվող շուկայի առևտրային համակարգում արժեթղթերի առնվազն մեկ գնման և մեկ վաճառքի գնի միաժամանակյա հայտարարումը,

11) առևտրային նստաշրջան՝ օրվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում կարգավորվող շուկայի առևտրային համակարգում կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով իրականացվում է արժեթղթերի առևտուրը,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. սեպտեմբերի 11-ին:

12) սպրեդ՝ շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգում ներկայացված գնման և վաճառքի հայտերում նշված գների կամ դրանց համարժեք եկամտաբերությունների տարբերությունը, որը հաշվարկվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սահմանված կարգով:»,

2) Կանոնակարգի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) գործարքը կնքող անձը շուկա ստեղծող է, որը գործում է սույն կանոնակարգի Հավելված 4-ի պահանջներին և կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սահմանված շուկա ստեղծողի գործունեության վերաբերյալ կանոնին համապատասխան, որն առնվազն ներառում է.

ա. շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման, կասեցման և դադարեցման հիմքերը և կարգը, ներառյալ՝ վաղաժամկետ դադարեցման դեպքում շուկայի օպերատորին տեղեկացման կարգը,

բ. շուկա ստեղծողի կողմից երկկողմանի գնանշման ապահովման կարգն ու պայմանները, շուկա ստեղծողի սպրեդի չափը և հաշվարկման կարգը,

գ. շուկա ստեղծողի գործունեությանը ներկայացվող պահանջները, սահմանափակումները և արտոնությունները,

դ. շուկա ստեղծողի և նրա գործունեության նկատմամբ սահմանված պահանջների և սահմանափակումների պահպանման և վերահսկման կարգը,

ե. շուկա ստեղծողի գործունեության պատասխանատվությունը՝ իր գործունեության նկատմամբ սահմանված պահանջների խախտման համար:»,

3) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 4-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մտնելու պահից մեկամսյա ժամկետում կարգավորվող շուկայի օպերատորը պետք է իր կանոնները համապատասխանեցնի սույն որոշմամբ սահմանված պահանջներին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
16 սեպտեմբերի 2020 թ., N 149-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 11-ի
թիվ 149-Ն որոշմամբ

«Հավելված 4
«Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները,
դրանց արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները
և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները»
սահմանող Կանոնակարգ 4/17-ի

ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Շուկա ստեղծողը պարտավոր է իր, որպես շուկա ստեղծողի, գործառույթների շրջանակներում՝
   1) առևտրային նստաշրջանի ընթացքում ապահովել երկկողմանի գնանշման անընդհատությունը մրցակցային գներով,
   2) երկկողմանի գնանշման հայտերը ներկայացնել մասնակի բավարարման պայմանով,
   3) երկկողմանի գնանշման հայտերը ներկայացնել իր անունից և իր հաշվին,
   4) իր և թողարկողի միջև առկա՝ շուկա ստեղծողի պարտավորությունների կատարման հետ կապված ցանկացած տեսակի համաձայնության կամ պայմանավորվածության մասին տեղեկատվությունը բացահայտել կարգավորվող շուկայի օպերատորին՝ բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքի:
2. Սույն Հավելվածի 1-ին կետի իմաստով երկկողմանի գնանշումը համարվում է՝
   1) մրցակցային գներով, երբ առքի և վաճառքի գնանշումները կատարվել են կարգավորվող շուկայի օպերատորի կանոնով սահմանված սպրեդի սահմաններում,
   2) անընդհատությունն ապահոված, երբ երկկողմանի գնանշումն առևտրային համակարգում առկա է եղել կարգավորվող շուկայի օպերատորի կանոնով սահմանված ժամանակահատվածում:

3. Շուկա ստեղծողը իր կարգավիճակի վաղաժամկետ դադարեցման դեպքում պարտավոր է դադարեցումից առնվազն 30 օր առաջ տեղեկացնել կարգավորվող շուկայի օպերատորին այդ մասին:

4. Շուկա ստեղծողն իրավունք ունի փոփոխել երկկողմանի գնանշումը կարգավորվող շուկայի օպերատորի կանոնով սահմանված սպրեդի սահմաններում:

5. Կարգավորվող շուկայի օպերատորն իր կանոններով կարող է սահմանել սույն Հավելվածի 1-ին կետով սահմանված պահանջներից բացառություններ, եթե շուկա ստեղծողի կողմից իր անունից և իր հաշվին կնքված գործարքների ընդհանուր ծավալը գերազանցում է կարգավորվող շուկայի օպերատորի կանոնով սահմանված չափը:

6. Կարգավորվող շուկայի օպերատորն իր կանոններով կարող է շուկա ստեղծողի համար սահմանել սույն Հավելվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունների կատարումից բացառություններ՝ Օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված արտակարգ դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ իրավիճակներում:

7. Յուրաքանչյուր դասի արժեթղթերի գծով շուկա ստեղծողի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի կարգավորվող շուկայի օպերատորի ինտերնետային կայքում, այդ թվում՝ սույն Հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» Բաժին 13-ը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
16 սեպտեմբերի 2020 թ., N 150-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. սեպտեմբերի 11-ին:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 233 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության գործընթացները, նվազեցնել և կանխարգելել այն ռիսկերը, որոնք կարող են վտանգել վճարահաշվարկային համակարգերի բնականոն գործունեությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, 6-րդ և 7-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի ««Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը» հաստատելու մասին թիվ 295-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության իրականացման հատուկ կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջ սահմանելու մասին» թիվ 223-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն ստացած Համակարգի օպերատորների համար սույն որոշման Հավելվածով հաստատված կանոնակարգի Բաժին 3-ով սահմանված պահանջները ուժի մեջ են մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

30 սեպտեմբերի 2020 թ., N 154-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. սեպտեմբերի 25-ին:

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 154-Ն որոշմամբ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի հունիսի 8-ի թիվ 295-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ18

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրման, տրամադրված թույլտվության կասեցման և դադարեցման, համակարգի օպերատորի փոփոխման, համակարգին և դրա գործունեությանը ներկայացվող պահանջները:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված վճարահաշվարկային ծառայությունը (այսուհետ՝ դրամական միջոցների փոխանցում) հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի օպերատորների համագործակցությամբ իրականացվելու արդյունքում ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներբանկային վճարահաշվարկային համակարգերի և այն վճարահաշվարկային համակարգերի վրա, որոնցում Կենտրոնական բանկը հանդիսանում է համակարգի օպերատոր: Սույն կետից բացառություն են կազմում սույն կանոնակարգով սահմանված Համակարգի գործունեությանը ներկայացվող պահանջները, որոնք տարածվում են նաև այն վճարահաշվարկային համակարգերի վրա, որոնցում Կենտրոնական բանկը հանդիսանում է համակարգի օպերատոր:

4. Սույն կանոնակարգով սահմանված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-Նեթ ցանցի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով, կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Փաստաթղթերը ներկայացվում են Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի Էֆ» ֆորմատով: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում նշվում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկություններն արժանահավատ են և ամբողջական, և որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված պատասխանատվության և Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրման մերժմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) Համակարգ՝ Օրենքի 3-րդ հոդվածի «ժթ» կետով սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգ,
2) Համակարգի մասնակից՝ Համակարգի օպերատորի հետ Համակարգում մասնակցության պայմանագիր կնքած վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող անձ (հայաստանյան և (կամ) արտասահմանյան բանկ և (կամ) վճարահաշվարկային կազմակերպություն) այդ թվում՝ Համակարգի օպերատոր,
3) Համակարգի օպերատոր՝ Օրենքի 3-րդ հոդվածի «դ» կետով սահմանված և սույն կանոնակարգով սահմանված կարգով թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ դիմած անձ,
4) Ներբանկային համակարգ՝ Օրենքի 3-րդ հոդվածի «ժը» կետով սահմանված համակարգ,
5) Համակարգի գործունեության կանոններ՝Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված փաստաթուղթ, որով սահմանվում են Համակարգում մասնակցության, Հարակից համակարգի հետ համագործակցության (առկայության դեպքում) պայմանների, ինչպես նաև քլիրինգի, պրոցեսինգի իրականացման և վերջնահաշվարկի կատարման հետ կապված ընդհանուր կանոններն ու ընթացակարգերը և դրանք ապահովող տեխնիկածրագրային միջոցների կիրառման կարգն ու պայմաններ,
6) Օպերատորի ղեկավար՝ Օպերատոր հանդիսացող կազմակերպության գործադիր տնօրեն կամ նրա պարտականությունները իրականացնելու իրավասություն ունեցող Կենտրոնական բանկում գրանցված ղեկավար անձ,
7) Հարակից համակարգ՝ Համակարգի ցանկացած արտասահմանյան մասնակցի, բացառությամբ Օպերատորի, հետ համագործակցող այլ արտասահմանյան համակարգ, որի միջոցով կարելի է մատուցել ծառայություններ Համակարգով,
8) Համակարգի վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպություն/հաշվարկային բանկ՝ Օրենքի 3-րդ հոդվածի «է» կետով սահմանված գործողությունն իրականացնող կազմակերպություն,
9) Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպություն՝ Օրենքի 3-րդ հոդվածի «ժ» կետով սահմանված գործընթացի իրականացումն ապահովող կազմակերպություն,
10) Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպություն՝Օրենքի 3-րդ հոդվածի «զ» կետով սահմանված գործընթացի իրականացումն ապահովող կազմակերպություն,
11) Համակարգի ծրագրային ապահովում (այսուհետ՝ Համակարգի ԾԱ)՝ Համակարգի կողմից ծառայությունների մատուցման համար կիրառվող ծրագիր (ծրագրային համալիր),
12) Ներպետական վճարումներ՝ անկանխիկ վճարումներ (գործարքի երկու կողմում իրականացված փոխանցումները կամ վճարումները անկանխիկ են), որոնք կատարվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և ներառում են ինչպես ֆինանսական կազմակերպությունների սեփական, այնպես էլ դրանց հաճախորդների կողմից կատարված վճարումները և (կամ) փոխանցումները,
13) Ֆինանսական շուկայի ենթակառուցվածք՝ բազմակողմանի հարաբերությունների համակարգ, որն օգտագործվում է վճարումների, արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների կամ այլ ֆինանսական գործառնությունների քլիրինգի, վերջնահաշվարկի կամ հաշվառման ապահովման նպատակով:

6. Սույն կարգում կիրառվող այլ հասկացությունները ունեն Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

7. Համակարգ ստեղծելու և գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու համար Համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետևյալ փաստաթղթերը.

1) Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն ստանալու միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
2) Համակարգի մասնակիցներից յուրաքանչյուրի կառավարման իրավասու մարմնի որոշումը Համակարգին անդամակցելու մասին,
3) Համակարգի Օպերատորի և Համակարգի մասնակիցների միջև կնքված գործունեության պայմանագրի պատճենը կամ պայմանագրի նախագիծը, որով առնվազն պետք է սահմանված լինեն Համակարգի օպերատորի անվանումը, Օպերատորի և Համակարգի մասնակիցների իրավասությունները, պարտականություններն ու պատասխանատվությունը: Այն դեպքում, երբ Համակարգի օպերատորի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացվել են Համակարգի մասնակիցների հետ կնքվող պայմանագրերի նախագծերը, ապա թույլտվությունը ստանալուց հետո, առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, Համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում Համակարգի առնվազն երկու մասնակցի հետ կնքած պայմանագրերի ստորագրված տարբերակների պատճենը: Սույն կետում նշված ժամկետում պայմանագրերի ստորագրված տարբերակների պատճենը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում տրամադրված թույլտվությունը համարվում է ուժը կորցրած:
4) Համակարգի մասնակիցների միջև պարտավորությունների բաշխման, Համակարգի կազմակերպման, կառավարման, գործունեության մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
5) Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված Համակարգի գործունեության կանոնակարգ, որի դրույթները պարտադիր են Համակարգի բոլոր մասնակիցների համար և ներառում են.
   ա. Համակարգի գործունեության կանոնները,
   բ. Համակարգում նախատեսվող ծառայությունների մատուցումը նկարագրող ընթացակարգերը՝ ըստ ծառայության տեսակի,
   գ. Համակարգի կառավարման և կազմակերպման կարգը և պայմանները,
   դ. Դիտորդ խորհուրդ ունենալու դեպքում՝ վերջինիս ձևավորման, գործունեության իրականացման կարգը և պայմանները,
6) Համակարգի գործունեության տնտեսական ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,
7) Համակարգի օպերատորի ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

8. Եթե սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Համակարգի օպերատորին, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Սույն կետով սահմանված ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի, նյութերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը մերժվում է՝ փաստաթղթերը թերի կամ ոչ ամբողջական լինելու հիմքով:

9. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված բոլոր փաստաթղթերը ստանալու պահից երկամսյա ժամկետում տալիս է Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվությունը կամ մերժում է թույլտվության տրամադրումը: Սույն մասով նախատեսված երկամսյա ժամկետը որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը չմերժելու կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին դիմորդին չտեղեկացնելու դեպքում թույլտվությունը համարվում է տրված:

10. Սույն կանոնակարգով սահմանված թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

11. Սույն կանոնակարգով սահմանված թույլտվության ստացման համար ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում փոփոխություն տեղի ունենալու դեպքում Համակարգի օպերատորը 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ, ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12. Կենտրոնական բանկը մերժում է սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը, եթե.

1) չեն պահպանվել Օրենքի 6-րդ Հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները.
2) առկա են Օրենքի 8.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը:

13. Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին տեղեկացնում է Համակարգի օպերատորին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Համակարգ ստեղծելու թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Համակարգի օպերատորն իրավունք ունի Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն ստանալու նոր միջնորդագիր ներկայացնել սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով:

14. Սույն կանոնակարգով սահմանված կարգով տրամադրված թույլտվությունը Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ կասեցնելու մասին որոշում կայացնելու դեպքում Համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում Համակարգի ստեղծման և գործունեության թույլտվությունը կասեցնելու մասին դիմում և սույն կանոնակարգի Հավելված 5-ով սահմանված փաստաթղթերը՝ ոչ ուշ, քան Համակարգի գործունեության թույլտվությունը կասեցնելու մասին օպերատորի իրավասու մարմնի որոշումն ուժի մեջ մտնելուց 15 աշխատանքային օր առաջ: Համակարգի օպերատորի դիմումին Կենտրոնական բանկի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում չառարկելու դեպքում Համակարգի ստեղծման և գործունեության թույլտվությունը համարվում է կասեցված՝ օպերատորի իրավասու մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

15. Սույն կանոնակարգով սահմանված կարգով տրամադրված Համակարգի գործունեության թույլտվությունը Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ դադարեցնելու մասին որոշում կայացնելու դեպքում Համակարգի օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում Համակարգի գործունեու-

թյան թույլտվությունը դադարեցնելու մասին դիմում և սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված փաստաթղթերը՝ ոչ ուշ, քան Համակարգի գործունեությունը դադարեցնելու մասին օպերատորի իրավասու մարմնի որոշումն ուժի մեջ մտնելուց 15 աշխատանքային օր առաջ: Կենտրոնական բանկը 15 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է Համակարգի օպերատորի դիմումի հիման վրա Համակարգի գործունեությունը դադարեցնելու կամ դադարեցումը մերժելու մասին որոշում: Համակարգի օպերատորի դիմումի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում որոշում չկայացնելու դեպքում Համակարգի ստեղծման և գործունեության թույլտվությունը համարվում է դադարեցված՝ օպերատորի իրավասու մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

16. Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ Համակարգի գործունեության թույլտվությունը կարող է կասեցվել ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով՝ դիմումում նշելով կասեցման հստակ ժամկետը:

17. Կասեցման ողջ ժամանակաշրջանում Համակարգի մասնակիցները չեն կարող տվյալ Համակարգով վճարահաշվարկային որևէ ծառայություն մատուցել, բացառությամբ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրամադրված Համակարգի գործունեության թույլտվությունը կասեցնելու վերաբերյալ որոշման մեջ նշված առանձին վճարահաշվարկային ծառայությունների:

18. Համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության կասեցման կամ գործունեության դադարեցման դեպքում Համակարգի մասնակիցները չեն կարող Համակարգով նոր գործառնություններ իրականացնել և չեն կարող ստանձնել նոր պարտավորություններ՝ միաժամանակ շարունակելով կատարել նախկինում ստանձնած և չմարված պարտավորությունները:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ, ԾՐԱԳՐԱՅԻՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

19. Համակարգի օպերատորը իր գործունեությունը պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և կարող է մատուցել բացառապես Օրենքով և սույն կանոնակարգով տրված թույլտվությամբ սահմանված ծառայություններ:

20. Համակարգի կանոնները և ընթացակարգերը պետք է մշակված լինեն այնպես, որ Համակարգի ցանկացած մասնակից ունենա պատկերացում Համակարգում իր մասնակցության արդյունքում առաջացող ֆինանսական ռիսկերի ազդեցության, այդ ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումներում իր ունեցած դերի և իրավական հետևանքների մասին:

21. Եթե Համակարգի կանոնակարգով և (կամ) Օպերատորի հետ հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով նախատեսված է դրանցում Օպերատորի կողմից փոփոխություններ կատարելու վերաբերյալ միանձնյա որոշում կայացնելու իրավասություն, ապա պետք է սահմանված լինի, որ Համակարգի օպերատորը որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ պետք է տեղեկացնի Համակարգի բոլոր մասնակիցներին:

22. Համակարգի գործունեության կանոնները և (կամ) ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերը պետք է ներառեն.

1) Համակարգում մատուցվող ծառայությունների տեսակները, ծառայությունների մատուցման կարգը՝ ներառյալ անվերադարձելիության և վերջնականության պահերը,
2) Պրոցեսինգի, քլիրինգի և (կամ) վերջնահաշվարկի իրականացման կարգն ու պայմանները, ներկայացվող պահանջները, համաձայն որոնց Համակարգում պրոցեսինգ, քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ կարող է իրականացնել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում պրոցեսինգ, քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպությունը,
3) Համակարգում մասնակցության և Համակարգից դուրս գալու և (կամ) մասնակցության կասեցման ընթացակարգերը,

4) Համակարգի մասնակիցներին դասակարգման և նրանց կողմից մատուցվող ծառայությունների տեսակները սահմանող կարգը,
5) Հարակից համակարգի միջոցով Համակարգով ծառայություններ մատուցելու դեպքում՝ ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները (առկայության դեպքում),
6) Համակարգի մասնակցի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվության չափը,
7) սակագնային քաղաքականությունը, այդ թվում՝ Համակարգի մասնակիցների նկատմամբ կիրառվող միջնորդավճարների գանձման մասով,
8) Համակարգում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ Համակարգի մասնակցին տեղեկացման կարգը, մասնավորապես՝ Համակարգում մասնակցության պայմանագրով կամ այլ փաստաթղթով նախատեսված Համակարգի մասնակցի իրավունքների, պարտավորությունների կամ պատասխանատվության փոփոխման հետ կապված,
9) Համակարգով կամ Հարակից համակարգով (առկայության դեպքում) նախաձեռնած ծառայությունը Համակարգով կամ Հարակից համակարգով չստանալու դեպքում՝ Համակարգի մասնակիցների գործողությունների կարգն ու պայմանները, սահմանված առավելագույն ժամկետները,
10) Համակարգի մասնակիցների և վերջինիս հաճախորդների կողմից Համակարգով մատուցված ծառայությունների բողոքարկման կարգն ու պայմանները, այդ թվում՝ Հարակից համակարգով մատուցելու դեպքում,
11) Համակարգի աշխատանքը նկարագրող սխեման և ժամանակային գրաֆիկը,
12) Համակարգում վճարային փաստաթղթերի և կարգադրությունների էլեկտրոնային եղանակով փոխանակման կարգը,
13) Համակարգի անխափան աշխատանքի, տեղեկատվության մշակման, պահպանման, ներկայացման, ստացման, փոխանցման և գործարքների ժամանակին մշակման ապահովմանը ուղղված չափանիշները և դրանց ապահովման կարգը,
14) Համակարգում տեղեկատվության պահպանմանը ներկայացվող պահանջները,
15) Համակարգում ռիսկերի կառավարման միջոցները և իրականացվող միջոցառումների ցանկը,
16) արտակարգ իրավիճակներում Համակարգի մասնակիցների գործողությունների կարգն ու պայմանները՝ ղեկավարող աշխատանքային խմբի պատասխանատվության շրջանակը, արտակարգ իրավիճակի ի հայտ գալու դեպքում թույլատրելի վնասի մեծության չափը, վերականգնման միջոցառումները և ժամկետները,
17) Համակարգում տեղի ունեցած խափանումների վերաբերյալ Համակարգի մասնակցին տեղեկացման կարգն ու պայմանները,
18) Համակարգի կանոնների և ընթացակարգերի պահպանման հսկողության իրականացման կարգը,
19) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկատվություն:

23. Վճարային քարտերով ծառայություն մատուցելու դեպքում, բացի սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված պահանջների, Համակարգի կանոնները և ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերը պետք է պարունակեն նաև.

1) Վճարային քարտի անվանագրում, հավաստագրում և նույնականացում իրականացնելու կարգն ու պայմանները, անվտանգությանը ներկայացվող պահանջները,
2) ՊԻՆ կոդերի ստեղծման, պահպանման և Համակարգի մասնակցին տրամադրման կարգն ու պայմանները, անվտանգությանը ներկայացվող պահանջները:

24. Առանց բանկային հաշիվների բացման և (կամ) բանկային հաշիվների միջոցով դրամական միջոցների փոխանցման ծառայություն մատուցելու դեպքում, բացի սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված պահանջների, Համակարգի կանոնները և ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերը պետք է պարունակեն նաև.

1) դրույթ, համաձայն որի՝ Համակարգի հաշվարկային բանկում հաշիվ ունենալու իրավասություն չունենալու դեպքում Համակարգի արտասահմանյան բանկ, հայաստանյան կամ արտասահմանյան ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող Համակարգի մասնակիցը պարտավոր է Համակարգով վերջնահաշվարկի կատարումը ապահովելու նպատակով.

ա. ընտրել Համակարգի մասնակից հանդիսացող որևէ հայաստանյան բանկ, որը կհանդիսանա Համակարգի արտասահմանյան բանկ, հայաստանյան կամ արտասահմանյան ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող Համակարգի մասնակցի հաշվարկային գործակալ (այսուհետ՝ Համակարգի հաշվարկային գործակալ մասնակից), և

բ. ունենալ Համակարգի արտասահմանյան բանկ, հայաստանյան կամ արտասահմանյան ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող մասնակցի և Համակարգի հաշվարկային գործակալ մասնակցի միջև հարաբերությունները կարգավորող պայմանագիր,

2) դրույթ, համաձայն որի՝ Համակարգի մասնակցի կողմից դրամական միջոցների փոխանցում նախաձեռնելու համար Հաշվարկային բանկում համապատասխան դրամական ապահովվածություն չունենալու դեպքում Համակարգի օպերատորը պարտավոր է մերժել դրամական փոխանցման կատարումը: Ընդ որում՝ սույն կետով սահմանված ապահովվածությունը Համակարգի հայաստանյան բանկ մասնակիցը պետք է ապահովվի Հաշվարկային բանկում բացված իր բանկային հաշիվների միջոցով, իսկ Համակարգի արտասահմանյան բանկ, հայաստանյան կամ արտասահմանյան ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող Համակարգի մասնակիցների համար՝ Համակարգի հաշվարկային գործակալ հանդիսացող մասնակիցը՝ Հաշվարկային բանկում բացված իր բանկային հաշիվների միջոցով,

3) դրույթ, համաձայն որի՝ Համակարգի օպերատորը պարտավոր է գնահատել Համակարգի հաշվարկային գործակալ մասնակցի և Համակարգի արտասահմանյան բանկ, հայաստանյան կամ արտասահմանյան ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող մասնակցի միջև գործող հարաբերություններից ծագող ռիսկերի և դրանց սահմանափակմանը ուղղված Համակարգի հաշվարկային գործակալ մասնակցի կողմից կիրառվող միջոցները,

4) դրույթ, համաձայն որի՝ Համակարգի օպերատորը պարտավոր է գրանցել Համակարգի մասնակցի ներկայացրած բոլոր սպասարկման կետերը, որոնք բավարարում են իր կողմից սահմանված պահանջներին, և ապահովել դրանցում Համակարգի գործունեության իրականացումը, այդ թվում՝ տեղադրել Համակարգի մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումների և (կամ) Համակարգը սպասարկող ինքնասպասարկման սարքավորումների (սպասարկման կետերի) գտնվելու վայրերի (առնվազն բնակավայրերի) վերաբերյալ տեղեկատվությունը Համակարգի ԾԱ-ի մեջ կամ էլեկտրոնային տեղեկատուներում և ուղղակի ձևով (առանց հղումների) իր ինտերնետային կայքում տեսանելի վայրում:

25. Համակարգի կանոններով և ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերով չի կարող սահմանվել այլ Համակարգերում մասնակցելը սահմանափակող դրույթ:

26. Համակարգի օպերատորը պետք է.

1) հետևի իր կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պատշաճ կատարմանը,

2) ունենա ռիսկերի կառավարման համակարգ,

3) թույլտվություն ստանալուց հետո Կենտրոնական բանկ ներկայացնի Համակարգի մասնակիցների միջև կիրառվող միջնորդավճարների հաստատված տարբերակը, ինչպես նաև յուրաքանչյուր փոփոխության դեպքում ճշգրտված տարբերակը՝ ոչ ուշ, քան փոփոխությունները ուժի մեջ մտնելուց 10 աշխատանքային օր առաջ,

4) սահմանի, որ Համակարգում պրոցեսինգ, քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ իրականացնող Համակարգի մասնակիցը կարող է միակողմանի դադարեցնել (նման իրավասությամբ օժտված լինելու դեպքում) իր գործունեությունը Համակարգում, եթե տեղեկացրել են Օպերատորին՝ դադարեցման մասին որոշում կայացնելուց առնվազն երեք ամիս առաջ,
5) ունենա սեփականության իրավունքով, այդ թվում՝ լիցենզային պայմանագրով օգտագործման իրավունքով իրեն պատկանող Համակարգի ԾԱ, որի շահագործման համար ապահովի հիմնական և պահուստային կապի առկայությունը՝ Համակարգով մատուցվող ծառայությունների անընդհատությունը ապահովելու նպատակով:

27. Համակարգի ԾԱ-ն պետք է ապահովի.

1) տեղեկատվության ստեղծման, մշակման, պահպանման, ներկայացման, ստացման և փոխանցման անխափանությունը, ամբողջականությունն ու արժանահավատությունը,
2) Համակարգի ԾԱ-ին հասանելիություն ունեցող անձանց նույնականացումը,
3) Համակարգի ԾԱ-ի խափանումների կամ արտակարգ իրավիճակների դեպքում՝ տվյալների ամբողջականությունը, հասանելիությունը և գաղտնիությունը,
4) աշխատակայանների աշխատունակության, տեղեկատվական ռեսուրսների և Համակարգում ձևավորված տվյալներին հասանելիության ժամանակահատվածի մոնիտորինգը և հսկողությունը:

28. Համակարգի տեղեկատվական անվտանգության ապահովման, ինչպես նաև Համակարգի գործարար գործընթացների անընդհատության ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների գործառույթների պատվիրակման դեպքում Համակարգի օպերատորը պետք է ապահովի Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով իր գործունեությանը բնորոշ պահանջներին համապատասխանությունը և գործարար ծրագրերի, ընթացակարգերի, ուղեցույցների և պայմանագրերի առկայությունը, որոնք առնվազն պետք է սահմանեն.

1) Համակարգի ԾԱ ծրագրային կոդերը Օպերատորի տիրապետության տակ գտնվելու դեպքում՝ պահանջ այդ ծրագրային կոդերի կրկնօրինակը հիմնական սերվերի գտնվելու վայրից տարբերվող այլ սերվերային սենյակում կամ սերվերային սենյակի նկատմամբ սահմանված պահանջներին բավարարող այլ վայրում պահպանելու վերաբերյալ,
2) Համակարգի մասնակիցների գրանցումը, հեռացումը, նույնականացումը և իրավասությունների տրամադրումը Համակարգի ԾԱ-ի մեջ,
3) Համակարգի ԾԱ-ում գաղտնաբառերի օգտագործման քաղաքականությունը,
4) Համակարգի ԾԱ-ի տվյալների և տեղեկատվական հենքի պահուստային կրկնօրինակումը, արխիվացումը, պահպանումը և վերականգնումը,
5) Համակարգի ԾԱ-ի տվյալներին հասանելիություն ունեցող անձանց պարտականությունների տարանջատումը և դասակարգումը,
6) Համակարգի ԾԱ-ի տեղեկատվական ակտիվների դասակարգման (գաղտնիության մակարդակները, գաղտնի համարվող տեղեկատվության բնութագրիչները) և դրանց նկատմամբ հասանելիության իրավասությունների տրամադրման սկզբունքները,
7) Համակարգի ԾԱ-ի տեղեկատվական պաշտպանության գործընթացների կազմակերպման, դրանց նկատմամբ մոնիտորինգի իրականացման և սխալների բացահայտման ընթացակարգերը,
8) Պատահարների գրանցման և մոնիտորինգի իրականացման ընթացակարգերը,
9) Համակարգի ԾԱ-ի տեղեկատվական ակտիվների ամբողջականությունը, հասանելիությունը և գաղտնիությունը սպառնալիքներից և խոցելիություններից պաշտպանելու միջոցառումներ,
10) Սերվերային սենյակի նկատմամբ պահանջների նկարագրություն:

29. Համակարգի ԾԱ-ի մշակումը այլ անձին պատվիրակելու դեպքում, եթե ապահովված չէ սույն կանոնակարգի 28-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը, ապա Համակարգի օպերատորը

պետք է ունենա Համակարգի ԾԱ-ն մշակող ընկերության, Էսքրոու (Escrow) ծառայություններ մատուցող երրորդ ընկերության և Օպերատորի միջև կնքված պայմանագիր, որով պետք է սահմանվի Համակարգի ԾԱ ծրագրային կոդերի պահուստային պահպանման և արտակարգ իրավիճակում Օպերատորին հանձնելու պարտավորությունը:

30. Համակարգի օպերատորին բնորոշ գործառույթների հետ կապված գործընթացները, երրորդ անձի (այսուհետ՝ Մատակարար ընկերություն) միջոցով իրականացնելու դեպքում՝ Համակարգի օպերատորի հետ կնքվող պատվիրակման և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագիրը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ՝ պայմանագիրը կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ պայմանագրում պետք է սահմանված լինեն կողմերի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության շրջանակների վերաբերյալ առնվազն հետևյալ դրույթները.

1) Համակարգի օպերատորի կողմից Մատակարար ընկերության նկատմամբ պարբերական մոնիտորինգ իրականացնելու իրավասություն,
2) Համակարգի օպերատորի կողմից Մատակարար ընկերության համար արտաքին աուդիտ հրավիրելու իրավասություն, ինչպես նաև Կենտրոնական բանկի պահանջով Մատակարար ընկերությունում արտաքին աուդիտ հրավիրելու Համակարգի օպերատորի իրավասություն,
3) Մատակարար ընկերության նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից վերահսկողության, ստուգման, վերստուգման, ուսումնասիրությունների իրականացման հնարավորության վերաբերյալ նշում, բացառությամբ այն դեպքերի, երբ Մատակարարը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կազմակերպություն,
4) ծառայությունների դադարեցման դեպքում կողմերի գործողությունների նկարագրություն՝ ուղղված Համակարգի անընդհատության ապահովմանը,
5) վեճերի լուծման կարգը, այդ թվում՝ արդյոք Մատակարար ընկերությունը շարունակելու է մատուցել ծառայություններ վեճերի քննման և որոշման կայացման ընթացքում,
6) գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պաշտպանության և չբացահայտման պահանջ Մատակարար ընկերության համար,
7) Համակարգի օպերատորի կողմից մատակարար ընկերության միջոցով ծառայությունների մատուցում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների համաձայն:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

31. Համակարգը համարվում է համակարգային նշանակություն ունեցող, եթե բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն մեկին.

1) տվյալ համակարգով է իրականացվում ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 75%-ը և ավելին.
2) տվյալ Համակարգով են իրականացվում ֆինանսական շուկայում, այդ թվում՝ կարգավորվող շուկայում կնքված գործարքների, ինչպես նաև այլ վճարահաշվարկային համակարգերում, արժեթղթերի հաշվարկային համակարգերում կատարված գործառնությունների դրամական վերջնահաշվարկները:

32. Համակարգը համարվում է հանրային նշանակություն ունեցող, եթե բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն մեկին.

1) տվյալ համակարգը երկրի միակ մանրածախ վճարումների համակարգն է.
2) համակարգով իրականացվում է ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 25%-ը և ավելին.

3) համակարգով իրականացվում է տվյալ տեսակի (օրինակ՝ վճարային քարտերով ներհանրապետական վճարումներ, վճարային քարտերով միջազգային վճարումներ, առանց հաշվի բացման միջազգային վճարումներ, այլ) վճարումների ծավալի 30%-ը և ավելին: Իսկ առանց հաշվի բացման միջազգային դրամական փոխանցումների դեպքում նշված շեմը սահմանվում է 10% և ավելին.

4) տվյալ համակարգի միջոցով է կատարվում այլ վճարահաշվարկային համակարգերով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նույն տեսակի վճարումների համախառն ծավալի 30 և ավելի տոկոսի պրոցեսինգը և (կամ) քլիրինգը և (կամ) վերջնահաշվարկը:

33. Սույն կանոնակարգով սահմանված կարգով թույլտվություն ստացած Համակարգերը համակարգային կամ հանրային համարվելու դեպքում Օպերատորը պետք է ապահովի, որ.

1) համակարգային նշանակություն ունեցող համակարգերի դեպքում վերջնահաշվարկն իրականացվի իրական ժամանակում կամ առնվազն մինչև հաշվարկների կատարման օրվա վերջ,

2) համակարգային նշանակություն ունեցող համակարգերի դեպքում՝ վերջնահաշվարկի իրականացումը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում կամ ունենա ռիսկերի կառավարման այնպիսի մեխանիզմ, որը երաշխավորի վերջնահաշվարկի կատարման հուսալիությունը,

3) եթե վերջնահաշվարկը չի ապահովվում Կենտրոնական բանկում վարվող հաշիվներով, ապա համակարգի Օպերատորը պետք է նվազագույնի հասցնի և խստորեն վերահսկի առևտրային բանկերի միջոցով վերջնահաշվարկի կատարման արդյունքում առաջացող վարկային և իրացվելիության ռիսկը,

4) իրականացվի ռիսկերի մոնիտորինգ և վերլուծություն, ընդ որում.

ա. համակարգային նշանակություն ունեցող համակարգերի դեպքում՝ ընթացիկ,

բ. հանրային նշանակություն ունեցող համակարգերի դեպքում՝ պարբերական: Պարբերականությունը պետք է հստակ սահմանված լինի ըստ յուրաքանչյուր ռիսկի տեսակի և լինի հիմնավորված,

5) ունենա ռիսկերի կառավարման համակարգ, որը պետք է առնվազն ներառի.

ա. ռիսկերի կառավարման քաղաքականություն, ընթացակարգեր և համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու, գնահատելու և հսկելու Համակարգում առաջացող կամ նրա կողմից ստեղծվող ռիսկերը, ինչպես նաև իրականացնելու դրանց մոնիտորինգը: Պետք է նաև սահմանված լինի, թե ինչ դեպքերում պետք է վերանայվեն վերը նշված գործընթացները և փաստաթղթերը, և ինչ պարբերականությամբ,

բ. Համակարգում առկա կամ հավանական, և Համակարգի վրա ազդող, ինչպես նաև Համակարգի կողմից ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների և (կամ) ֆինանսական համակարգի վրա ազդեցություն ունեցող ռիսկերի, ռիսկերի կառավարման համար կիրառվող ընթացակարգերի, մեխանիզմների և (կամ) միջոցառումների նկարագրություն,

գ. Համակարգում ռիսկերի վերլուծության համար կիրառվող մեթոդները՝ ըստ ռիսկերի տեսակների,

դ. համակարգի անընդհատության չափանիշները և դրա ապահովման ընթացակարգերի առկայությունը, անընդհատության երաշխավորված մակարդակի ապահովումը: Օպերատորի կողմից բոլոր այն իրավիճակների և սցենարների բացահայտում, որոնք կարող են պոտենցիալ խոչընդոտ հանդիսանալ համակարգի կողմից իր կրիտիկական և խիստ անհրաժեշտ գործառնությունների և ծառայությունների անընդհատության համար: Դրանց վերականգնման կամ գործունեության բնականոն և սահուն դադարեցման համար բոլոր հնարավոր տարբերակները, որոշումների կայացման գործընթացը,

ե. ռիսկերի կառավարման կազմակերպչական կառուցվածքը, որը պետք է ապահովի ռիսկերի կառավարման համար սահմանված պահանջների՝ Համակարգի մասնակիցների կողմից իրականացման վերահսկողությունը: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը պետք է սահմանի

ռիսկերի կառավարման գործընթացի պատասխանատուներին՝ ըստ յուրաքանչյուր օղակի, նրանց պատասխանատվության շրջանակը և փոխհարաբերությունները,

զ. ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման կարգը ինչպես կազմակերպչական կառուցվածքի ներսում (այլ օղակների հետ փոխհարաբերությունները և ռիսկերի վերաբերյալ Օպերատորի կառավարման մարմիններին տեղեկացման ընթացակարգերը և հաշվետվողականությունը), այնպես էլ Համակարգի մասնակիցների և այլ շահագրգիռ կողմերի հետ,

է. վիճելի, ոչ ստանդարտ, այդ թվում՝ համակարգային խափանումների և արտակարգ իրավիճակներում համագործակցության կարգը,

ը. գործառնական ու տեխնոլոգիական միջոցների և գործընթացների փոփոխման ընթացակարգերը,

թ. համակարգում տեղեկատվության պաշտպանության ընթացակարգերը:

34. Համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող Համակարգերում վերջնահաշվարկի հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի ներքո պետք է առկա լինեն հետևյալ մեխանիզմներից առնվազն երկուսը.

1) Համակարգի մասնակիցների նկատմամբ սահմանված սահմանաչափեր՝ հաշվի առնելով ռիսկի մակարդակը,
2) երաշխավորման հիմնադրամ,
3) հերթերի կառավարման հնարավորություն,
4) վերջնահաշվարկի իրականացում՝ Համակարգի մասնակիցների կողմից վերջնահաշվարկի կատարումը ապահովող երաշխավորման միջոցների սահմաններում,
5) անվերադարձելի բանկային երաշխիք կամ ակրեդիտիվ,
6) վարկավորման հնարավորություն,
7) Համակարգի կանոններով սահմանված վերջնահաշվարկի հետ կապված ռիսկերի կառավարման այլ համարժեք մեխանիզմներ:

35. Սույն Գլխում սահմանված չափանիշներին համապատասխանող Համակարգի օպերատորը պետք է ունենա համապատասխան անձ, ով պատասխանատու կլինի.

1) Համակարգի համարժեքության (ադեկվատության) գնահատման հսկողության համար՝ Համակարգի կառավարման օղակներում ստուգում իրականացնելու, Համակարգում բացահայտված թերությունների վերացման և Համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ հիմնավոր առաջարկներ ներկայացնելու միջոցով,
2) Համակարգի տեղեկատվական անվտանգության ապահովումը գնահատելու համար՝ նպատակ ունենալով բարձրացնելու տեղեկատվության անվտանգության մակարդակը և կրճատելու գործառնական ռիսկերից առաջացող հնարավոր կորուստները,
3) Համակարգի արդյունավետությունը գնահատելու համար,
4) Համակարգի գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին և Համակարգի օպերատորի կողմից մշակված կանոններին ու ընթացակարգերին համապատասխանությունը գնահատելու համար:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

36. Համակարգերը համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող վճարահաշվարկային համակարգեր համարվելու ծավալային չափանիշները հաշվարկվում են տարեկան սկզբունքով: Ընդ որում.

1) ներհանրապետական համախառն վճարումների ծավալային չափանիշների դեպքում հաշվարկն իրականացվում է համախառն տարեկան սկզբունքով,
2) նույն տեսակի վճարումների ծավալային չափանիշների դեպքում՝ օրացուցային տարվա չորս եռամսյակներից առնվազն երկուսում սահմանված կշիռը զբաղեցնելու սկզբունքով:

37. Համակարգը համարվում է համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող՝ Կենտրոնական բանկի կողմից համակարգի Օպերատորին այդ մասին տեղեկացնելու (ծանուցելու) օրվանից: Սույն կետով նախատեսված տեղեկացումները Կենտրոնական բանկի կողմից ուղարկվում են Օպերատորին: Ընդ որում, սույն կետով սահմանված տեղեկացումը համակարգի Օպերատորին ուղարկվում է նաև այն դեպքում, երբ համակարգը դադարում է լինել համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող:

38. Համակարգը համակարգային կամ հանրային համարվելու դեպքում Կենտրոնական բանկի կողմից օպերատորին տեղեկացումն իրականացվում է.

1) ծավալային չափանիշների հիման վրա մինչև օրացուցային տարվան հաջորդող փետրվարի 15-ը (ոչ աշխատանքային օրվա դեպքում՝ վերջինիս հաջորդող առաջին աշխատանքային օրը),
2) ոչ ծավալային չափանիշների դեպքում.
   ա. նոր ստեղծվող Համակարգերի համար թույլտվության տրամադրման պահին.
   բ. գործող Համակարգերի համար՝ տվյալ փաստի ի հայտ գալու և(կամ) այդ մասին Կենտրոնական բանկի կողմից տեղեկանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

39. Համակարգի օպերատորի կողմից համակարգային կամ հանրային համարվելու վերաբերյալ Կենտրոնական բանկի տեղեկացումը ստանալու պահից 90 օրացուցային օր հետո նրանց նկատմամբ տարածվում են սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված համապատասխան պահանջները: Ընդ որում՝ Համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկ հիմնավոր փաստեր ներկայացնելու դեպքում տվյալ ժամկետը Կենտրոնական բանկի կողմից կարող է երկարաձգվել ևս 90 օրացուցային օրով:

40. Եթե Համակարգը դադարում է համարվել համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող, ապա Համակարգի օպերատորի կողմից այդ մասին Կենտրոնական բանկի տեղեկացումը ստանալու պահից վերջինիս նկատմամբ դադարում են կիրառվել սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված համապատասխան պահանջները:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

41. Կենտրոնական բանկի՝ թույլտվության տրամադրման գործընթացի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից վարվում է Համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվությունների գրանցամատյան, որում նշվում են հետևյալ տեղեկությունները.

1) Համակարգի անվանումը,
2) Համակարգ ստեղծելու և գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը,
3) Համակարգի օպերատորի անվանումը և գտնվելու վայրը,
4) Համակարգում յուրաքանչյուր Համակարգի մասնակցի անունը, կարգավիճակը, տիպը և ռեզիդենտությունը:

42. Համակարգում մասնակցության թույլտվությունը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

43. Համակարգի օպերատորի և (կամ) Համակարգի գործունեության կանոնակարգի փոփոխությունները ենթակա են Կենտրոնական բանկի հետ համաձայնեցման:

44. Համակարգի օպերատորի փոփոխման դեպքում Համակարգի գործող օպերատորը Կենտրոնական բանկի համաձայնեցմանն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Համակարգի օպերատորի փոփոխման վերաբերյալ դիմում՝ վավերացված և կնքված գործող օպերատորի գործադիր մարմնի ստորագրությամբ,
2) գործող օպերատորի իրավասու մարմնի որոշումը՝ Համակարգի օպերատորի փոփոխման վերաբերյալ,
3) Համակարգի օպերատորի փոփոխման արդյունքում սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված՝ Համակարգի նոր օպերատորի ղեկավարների մասին նոր տեղեկանք:

45. Համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման դեպքում Համակարգի օպերատորը Կենտրոնական բանկի համաձայնեցմանն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Համակարգի գործունեության կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրականացման համար դիմում՝ վավերացված և կնքված օպերատորի գործադիր մարմնի ստորագրությամբ,
2) Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված որոշումը՝ Համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ իրականացնելու վերաբերյալ, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով սահմանված գործունեության պայմանագրով կանոնակարգի հաստատման այլ ձև սահմանված լինելու դեպքում՝ այդ կարգով սահմանված ձևով հաստատված կանոնակարգը՝ համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ իրականացնելու վերաբերյալ,
3) Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված Համակարգի գործունեության փոփոխված կանոնակարգը, իսկ Համակարգի մասնակիցների միջև կնքված մասնակցության պայմանագրով կանոնակարգի հաստատման այլ ձև սահմանված լինելու դեպքում՝ այդ կարգով հաստատված ձևով փոփոխված կանոնակարգը: Միաժամանակ ներկայացնելով կանոնակարգում նախատեսվող փոփոխությունները նկարագրող ամփոփ փաստաթուղթ (տեղեկանք):

46. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 44-րդ կամ 45-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո երկամսյա ժամկետում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է համաձայնության տրամադրումը: Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում դիմումը չմերժելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

47. Կենտրոնական բանկը մերժում է փոփոխությունների իրականացումը, եթե տվյալ փոփոխությունը հակասում է Օրենքի, այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջներին, կամ համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝ տվյալ փոփոխությամբ կվտանգվի վճարահաշվարկային համակարգի կայունությունը կամ անվտանգությունը, կամ եթե պահպանված չեն սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված պահանջները:

48. Համակարգի օպերատորի, Համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխությունների իրականացման մերժման դեպքում Կենտրոնական բանկը մերժման հիմքերի մասին տեղեկացնում է Համակարգի օպերատորին:

49. Համակարգի մասնակիցների կազմում, կարգավիճակում և կամ նախկինում ներկայացված տեղեկատվության մեջ տեղի ունեցած փոփոխության (այդ թվում՝ Համակարգի մասնակցի հետ մասնակցության պայմանագրի դադարեցման) մասին Համակարգի օպերատորը փոփոխության կատարման պա-

հից հնգօրյա ժամկետում պետք է տեղեկացնի Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված նոր տեղեկանք:

50. Եթե Համակարգի մասնակիցների փոփոխման արդյունքում փոփոխության է ենթարկվում նաև Համակարգի գործունեության կանոնակարգը, ապա Համակարգի օպերատորը պետք է ներկայացնի Կենտրոնական բանկի համաձայնեցման նաև Համակարգի գործունեության նոր կանոնակարգը՝ համաձայն սույն կանոնակարգի 45-րդ կետով սահմանված ընթացակարգի:

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Համակարգի օպերատորի անվանումը _____
Կազմակերպական-իրավական ձևը _____
Գտնվելու վայրը _____
Գործունեության վայրը _____
Էլեկտրոնային փոստի հասցե _____
Սի-Բի-Էյ-Նեթ ցանցում գրանցման հասցե _____
Համակարգի անվանումը _____
Ստորև նշված վճարահաշվարկային ծառայությունների իրականացման համար
թույլտվություն_____

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը Հայաստանի Հանրապետությունում _____
_____
(համակարգի անվանումը)
վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման համար:
Կից ներկայացնում եմ՝
_____
_____
_____
_____
_____
_____

Գործադիր տնօրեն՝_____ _____
(անուն, ազգանունը) *(ստորագրությունը)*
Հիմնադիրներ՝_____ _____
(անուն, ազգանունը) *(ստորագրությունը)*

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Համակարգի անվանումը և գործունեության հիմնական նպատակը՝ նշելով Համակարգով նախատեսվող ծառայությունների տեսակը/տեսակները.

1.1. առանց բանկային հաշիվների բացման դրամական միջոցների փոխանցման իրականացում կանխիկ և (կամ) անկանխիկ եղանակով՝ տերմինալի, վճարման հանձնարարականի, պահանջագրի, ուղղակի դեբետագրման միջոցով և այլ, _____

(նշել ծառայության տեսակը)

1.2. բանկային հաշիվներին/հաշիվներից դրամական միջոցների փոխանցման իրականացում կանխիկ և (կամ) անկանխիկ եղանակով՝ տերմինալի, վճարման հանձնարարականի, պահանջագրի, ուղղակի դեբետագրման միջոցով և այլ, _____

(նշել ծառայության տեսակը)

1.3. վճարային քարտերով ծառայության մատուցում՝ քարտերի թողարկում (դեբետային, վարկային, հաշվարկային), քարտերի սպասարկում (կանխիկ, անկանխիկ, ինտերնետ միջավայրում և (կամ) բջջային հավելվածի միջոցով, այլ) այլ, _____

(նշել ծառայության տեսակը)

1.4. էլեկտրոնային փողերով ծառայության մատուցում՝ էլեկտրոնային փողի թողարկում (միանգամյա, վերալիցքավորվող, էլեկտրոնային քսակ, վիրտուալ/ցանցային փող և այլ), սպասարկում (կանխիկ, անկանխիկ, ինտերնետ միջավայրում և (կամ) բջջային հավելվածի միջոցով) այլ

_____

(նշել ծառայության տեսակը)։

2. Համակարգի մասնակիցները, նրանց պարտավորությունները և դերը համակարգում՝ խմբավորված ըստ յուրաքանչյուր Համակարգի մասնակցի.

2.1. Համակարգի Օպերատոր _____

(նշել անվանումը),

2.2. Համակարգում պրոցեսինգ իրականացնող Համակարգի մասնակից _____

(նշել Համակարգի մասնակցի անվանումը),

2.3. Համակարգում քլիրինգ իրականացնող Համակարգի մասնակից _____

(նշել Համակարգի մասնակցի անվանումը),

2.4. Համակարգում վերջնահաշվարկ իրականացնող Համակարգի մասնակից _____

(նշել Համակարգի մասնակցի անվանումը),

2.5. Համակարգում այլ կարգավիճակ ունեցող Համակարգի մասնակից _____

(նշել Համակարգի մասնակցի անվանումը և կարգավիճակը. օրինակ՝ վճարային քարտեր թողարկող կամ սպասարկող, այլ),

2.6. Համակարգի մասնակցի տիպը _____

(նշել Համակարգի մասնակցի տիպը. օրինակ՝ բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն, այլ),

2.7. Համակարգի մասնակցի ռեզիդենտությունը _____,

2.8. Համակարգի արտասահմանյան մասնակցի երկրի ISO կոդը _____,

2.9. Համակարգում Համակարգի մասնակցի մասնակցության պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը _____,

2.10. Համակարգում Համակարգի մասնակցի մասնակցության պայմանագրի ուժը կորցնելու ամսաթիվը (առկայության դեպքում) _____,

2.11. Համակարգի արտասահմանյան մասնակցի գործունեությունը կարգավորող մարմինը _____,

2.12. Հարակից համակարգերի ցանկ _____

(նշել Հարակից համակարգի անվանումը, ռեզիդենտությունը, օպերատորի անվանումը, ինչպես նաև Հարակից համակարգի և Համակարգի մասնակցի միջև կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը):

3. Համակարգի կառավարման բարձրագույն մարմինը _____

(օրինակ՝ Համակարգի մասնակիցների ընդհանուր ժողով, համակարգի օպերատորի կառավարման բարձրագույն մարմին, այլ):

Գործադիր տնօրեն՝

_____ _____

(անուն, ազգանունը) *(սփորագրությունը)*

Հավելված 3

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Համակարգի գործունեության տնտեսական ծրագիրը որոշակի հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացմանը հաջորդող երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, վճարահաշվարկային համակարգի տնտեսական գործունեությունը և ներքին կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է: Տնտեսական ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

I. Ընդհանուր դրույթներ
   1) համակարգի անվանումը,
   2) համակարգի ստեղծման նպատակները (հեռանկարները):

II. Գործունեության հիմնական ուղղությունները
   1) գործունեության հիմնական ուղղությունները և դրանց համառոտ բնութագիրը,
   2) ապագայում նախատեսվող ծառայությունները:

III. Մարքեթինգային վերլուծություն
   1) ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),
   2) ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները),
   3) հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը:

IV. Ռազմավարությունը
   1) դիրքավորում,
   2) խթանման ռազմավարություն,
   3) գնային ռազմավարություն,
   4) ներդրման ծրագիր:

V. Եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվարկը
   1) ֆինանսավորման աղբյուրները,
   2) առաջիկա 3 տարիների համար նախատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը, ինչպես նաև Համակարգում հաշվարկների բնագավառում առաջացող հնարավոր ռիսկերի գնահատումը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցները:

Գործադիր տնօրեն՝

_____ _____

(անուն, ազգանունը) *(ստորագրությունը)*

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Համակարգի անվանումը _____
Համակարգի օպերատորի անվանումը _____
Ընդհանուր տեղեկատվություն
Ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը _____
Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները
Զբաղեցրած պաշտոնը, դիրքը, հիմնական պարտականությունները _____
Քաղաքացիությունը _____
Անձնագրի տվյալները՝ այդ թվում գործող այլ անձնագրերի տվյալները (առկայության դեպքում) և հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
Հաշվառման վայր
Փաստացի բնակության վայր
Հեռախոսահամար
Էլեկտրոնային փոստի հասցե
Կրթություն, որակավորում

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Գտնվելու վայրը	Մասնագիտությունը	Սովորելու ժամանակաշրջանը (---թ-ից մինչև ----թ.)	Գիտական աստիճանները	Միջազգային որակավորման մակարդակը

3. Աշխատանքային գործունեությունը

N	Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը
1.					
2.					
3.					

4. Ղեկավարի վերաբերյալ այլ տեղեկություններ
   4.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
   o Ոչ
   o Այո, ներկայացնել մանրամասներ
   4.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
   o Ոչ
   o Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

4.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ
4.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

5. Դրամային (կամ այլ) պարտավորություններ
5.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար հանդիսանում եք
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
5.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար հանդիսանում եք
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

5.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպություն-ների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

5.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

6. Այլ տեղեկություններ

6.1. Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները. Անուն, ազգանուն, Անձնագրի տվյալներ, Փոխկապակցվածության ձև, Աշխատանքի վայր, Պաշտոն, Բնակության վայր, Հեռախոսահամար (բջջային և այլն)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա

6.2. Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները. Կազմակերպության անվանում, Գտնվելու վայր, Փոխկապակցվածության ձև, ՀՎՀՀ, Հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա

7. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել.

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

Հայտարարություն Օրենքով նախատեսված հիմքերի բացակայության մասին:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկանքում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Ես համաձայն եմ Կենտրոնական բանկին տեղեկացնել անձնական, կենսագրական և ֆինանսական տեղեկատվության մեջ տեղի ունեցող կամ ակնկալվող որևէ էական փոփոխության փաստի մասին:

Գործադիր տնօրեն՝ _____

(անուն, ազգանունը)

_____ _____

(ստորագրությունը) *(ամսաթիվը)*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով կանխելու Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությամբ պայմանավորված վարկային պարտավորությունները մարելու հետ կապված խնդիրներ ունեցող հաճախորդների վարկային պատմության վատթարացման հետ կապված խնդիրները,

հիմք ընդունելով «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի 35-րդ կետում «կատարումից:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական և արտակարգ դրության ողջ ժամանակաշրջանում սույն կետով սահմանված ծանուցման տեքստից հանվում է «ինչպես նաև այդ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով վարկային բյուրոյին և Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին տրամադրելու մասին:» արտահայտությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թ. սեպտեմբերի 30-ից կատարվող ծանուցումների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
1 հոկտեմբերի 2020 թ., N 164-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. սեպտեմբերի 30-ին:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 39
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 43
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 48
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 49
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 59
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 79
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 89
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 91
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 100
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2020 թ. օգոստոս	2020 թ. օգոստոսի իրական աճի փոփոխությունը 2019 թ. օգոստոսի նկատմամբ (%)	2020 թ. սեպտեմբեր	2020 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2019 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		-9.8		-7.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	182533.1	-1.2	190323.4	1.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	41461.8	-5.3	45311.4	0.6
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	256191.6	-14.8	268659.6	-10.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	145562.5	-19.3	151913.6	-18.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	656.4	-6.9	632.2	-1.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	234596[1]	2.1[2]	229684[3]	2.7[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2020 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	0.2[1]	0.3	1.7
Փետրվար	-0.2	-0.9	2.6	-3.2
Մարտ	0.5	-0.4	-1.7	-1.0
Ապրիլ	0.9	-1.2	0.7	-0.4
Մայիս	-0.1	-0.3	8.4	-6.9
Հունիս	-1.4	0.5	-0.9	-13.1
Հուլիս	-2.1	1.0	1.8	-11.9
Օգոստոս	-0.1	2.0	1.2	-13.9
Սեպտեմբեր	-0.2	0.9	-0.5	-3.4
2020 թ. հունվար - սեպտեմբերը 2019 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ	0.9	1.8	7.4	-2.6

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.8	1.8	1.4
Փետրվար	-0.5	0.6	-0.2
Մարտ	0.1	0.1	0.5
Ապրիլ	-0.3	-0.1	0.9
Մայիս	-1.0	-0.4	-0.1
Հունիս	-1.6	-1.9	-1.4
Հուլիս	-1.2	-1.9	-2.1
Օգոստոս	0.6	-0.4	-0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	-0.2
Հոկտեմբեր	0.1	0.6	
Նոյեմբեր	1.0	1.1	
Դեկտեմբեր	1.5	1.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.9	0.8	0.3
Փետրվար	3.3	1.9	-0.5
Մարտ	3.7	1.9	-0.1
Ապրիլ	2.4	2.2	0.9
Մայիս	1.6	2.8	1.2
Հունիս	0.9	2.5	1.7
Հուլիս	2.3	1.7	1.5
Օգոստոս	3.3	0.6	1.8
Սեպտեմբեր	3.5	0.5	1.4
Հոկտեմբեր	2.8	0.9	
Նոյեմբեր	1.8	1.0	
Դեկտեմբեր	1.8	0.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	2020 թ. սեպտեմբերը 2019 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**1.4**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	0.8	0.30
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.8	0.41
Հագուստ և կոշիկ	-2.8	-0.10
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.7	0.11
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	1.3	0.04
Առողջապահություն	2.5	0.24
Տրանսպորտ	-0.4	-0.04
Կապ	-0.1	0.00
Հանգիստ և մշակույթ	3.5	0.08
Կրթություն	2.0	0.06
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.0	0.03
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.2	0.19

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	-0.2	0.0
Փետրվար	0.3	0.1	0.1
Մարտ	0.2	0.1	0.0
Ապրիլ	0.2	0.0	0.5
Մայիս	-0.1	-0.1	0.0
Հունիս	-0.1	0.0	-0.1
Հուլիս	-0.2	-0.2	-0.1
Օգոստոս	0.2	0.1	0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	0.3
Հոկտեմբեր	0.5	0.1	
Նոյեմբեր	0.2	0.1	
Դեկտեմբեր	0.0	0.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.8	1.2	0.4
Փետրվար	4.1	1.0	0.4
Մարտ	4.0	0.9	0.3
Ապրիլ	3.8	0.7	0.8
Մայիս	3.4	0.7	0.8
Հունիս	3.2	0.8	0.7
Հուլիս	3.0	0.8	0.8
Օգոստոս	2.7	0.7	0.8
Սեպտեմբեր	2.6	0.6	0.9
Հոկտեմբեր	2.5	0.2	
Նոյեմբեր	1.9	0.1	
Դեկտեմբեր	3.4	1.8	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2020 թ. սեպտեմբերը 2019 թ. սեպտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	0.9	
Գազ՝ փոխադրամիջոցների լիցքավորման համար	2.0	0.09
Հաց ցորենի, բարձր տեսակի	2.1	0.09
Հնդկացորեն	35.5	0.08
Վիրահատական ծառայություններ	4.2	0.07
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	6.1	0.06
Սուրճ աղացած	8.6	0.04
Նրբերշիկ, սարդելկա	4.2	0.03
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	-5.0	-0.04
Շաքարավազ	-8.2	-0.04
Բուսական յուղ արևածաղկի	-5.6	-0.05
Պաղպաղակ սերուցքային	-29.6	-0.05
Հավի բուդ՝ թարմ, պաղեցրած	-8.3	-0.05
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	-11.5	-0.11
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	-7.3	-0.11
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-3.4	-0.13

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2020 թ. հունվար - օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - օգոստոսը 2019 թ. հունվար - օգոստոսի նկատմամբ (%)	2020 թ. հունվար - սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - սեպտեմբերը 2019 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕԲ)	1567.9	94.0	1828.1	95.6
Ներմուծում (ՍԻՖ)	2817.5	87.6	3219.9	86.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1249.6	82.0	1391.8	76.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	95091	31019	64073	764634	289104	475530
ԱՄՆ	22917	18420	4497	200212	234290	-34078
Ուկրաինա	1243	1360	-117	8939	10892	-1953
Ղազախստան	2849	169	2681	21354	3658	17695
Գերմանիա	3401	4942	-1541	29741	24702	5039
Իսպանիա	986	2445	-1459	8349	12994	-4645
Ֆրանսիա	2962	1601	1362	24386	12057	12330
ԱՄԷ	2473	3366	-893	17416	15736	1679
Չինաստան	263	5828	-5565	3058	42185	-39127
Թուրքիա	229	892	-663	1612	7572	-5960
Այլ երկրներ	33213	59342	-26129	321963	414054	-92091
Ընդամենը	**165626**	**129382**	**36245**	**1401664**	**1067245**	**334419**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2020 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	76485	37090	39395	560402	318367	242035
ԱՄՆ	61493	15354	46138	301643	101042	200601
Ուկրաինա	1888	1429	459	11677	10545	1132
Ղազախստան	2706	654	2052	15722	3933	11789
Գերմանիա	5033	4012	1022	37320	50812	-13492
Իսպանիա	1283	1499	-216	9009	8945	64
Ֆրանսիա	4212	1220	2993	30847	8824	22022
ԱՄԷ	5260	1429	3830	26720	12728	13992
Չինաստան	166	6392	-6226	1712	38398	-36685
Թուրքիա	272	1154	-882	2052	8107	-6056
Այլ երկրներ	31712	54910	-23198	281369	287128	-5759
Ընդամենը	**190509**	**125143**	**65367**	**1278471**	**848828**	**429643**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	45291	14772	30519	367496	139440	228056
ԱՄՆ	10914	8772	2142	96338	112493	-16155
Ուկրաինա	592	648	-56	4296	5240	-944
Ղազախստան	1357	80	1277	10267	1761	8507
Գերմանիա	1619	2353	-734	14314	11880	2434
Իսպանիա	469	1164	-695	4020	6252	-2232
Ֆրանսիա	1410	762	648	11736	5804	5932
ԱՄԷ	1178	1603	-425	8370	7563	808
Չինաստան	125	2775	-2650	1475	20284	-18809
Թուրքիա	109	425	-316	776	3643	-2868
Այլ երկրներ	15817	28260	-12444	155019	198689	-43670
Ընդամենը	**78881**	**61615**	**17266**	**674106**	**513048**	**161058**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2020 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	37213	18048	19166	271111	154053	117058
ԱՄՆ	29921	7485	22435	146140	49025	97116
Ուկրաինա	919	696	223	5651	5105	547
Ղազախստան	1316	318	998	7604	1904	5700
Գերմանիա	2449	1955	494	18073	24419	-6346
Իսպանիա	624	730	-105	4358	4331	27
Ֆրանսիա	2049	594	1456	14926	4268	10658
ԱՄԷ	2556	696	1860	12942	6159	6783
Չինաստան	81	3110	-3029	829	18598	-17769
Թուրքիա	132	561	-429	992	3922	-2930
Այլ երկրներ	15429	26726	-11298	136190	139004	-2814
Ընդամենը	**92689**	**60918**	**31772**	**618816**	**410787**	**208029**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2019	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	148.2	147.3	147.2	147.9	149.4	145.4	141.9	142.3	142.3	141.9	142.6	143.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	296.5	294.4	296.0	299.8	305.3	302.9	301.8	304.5	305.0	303.9	302.7	302.1
2020	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	144.3	146.9	149.7	154.1	154.3	149.6	146.7	145.7	147.1			
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	300.5	307.0	312.2	319.7	321.1	316.8	318.0	317.2	321.9			

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[2] Բոլոր փվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:
[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փվյալները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով, սկսած 2018 թվականի հունվարից, ԻԻՀ կենտրոնական բանկի փվյալների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փվյալները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2019	2020								
